Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
2024թ. մարտի 18-ից 21-ը Բելգիայի Թագավորություն
գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**

   Նարինե Միկիչյան - ՀՀ պետական եկամուտների կոմիտեի միջազգային համագործակցության վարչության հարկային համագործակցության բաժնի գլխավոր հարկային տեսուչ

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Քաղաք Բրյուգե (Բելգիայի Թագավորություն), 2024 թվականի մարտի 18-ից 21-ը

3. **Հրավիրող կողմը՝**

   Հարկային մարմինների ներեվրոպական կազմակերպությունը (ՀՄՆԿ, IOTA)

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝**

   Գործուղման նպատակն էր մասնակցել ամենամյա ՀՄՆԿ հիմնական կոնտակտային անձանց համաժողովին, որի հերթական 31-րդ համաժողովը կայացավ քաղաք Բրյուգե (Բելգիայի Թագավորություն)՝ նախորդ տարվա կատարված աշխատանքները ամփոփելու և գալիք աշխատանքային ծրագիրը կազմելու նպատակով:

5. **Քննարկված թեմաները՝**

   Համաժողովի ընթացքում քննարկվեց ընթացիկ տարվա ՀՄՆԿ օրակարգի վիճահարույց հարցերը, հետագա ռազմավարությունը, մասնավորապես՝ առավել մանրամասն ներկայացվեց կառույցի ներկայիս բյուջետային խնդիրները՝ կապված տարբեր գործոնների հետ, որոնց լուծման համար քննարկվեցին հնարավոր տարբերակներ, վերջիններիս մասով ՀՄՆԿ անդամ երկրները քարտուղարությանը պետք է ներկայացնեն իրենց տեսակետները մինչև ընթացիկ տարվա ապրիլ ամիսը: Քարտուղարության կողմից կազմակերպվեց նաև գործնական խմբային աշխատանքներ՝ կապված ՀՄՆԿ նոր վեբ-կայքի ուսուցման, ներկայացման, ինչպես նաև կոնտակտային անձանց կողմից նոր եղանակով հարցումների լրացման շուրջ:

   Անդրադարձ կատարվեց նաև առաջիկա 28-րդ Ընդհանուր Համաժողովի և վերջինիս շրջանակում պլանավորված միջոցառումների նախապատրաստական աշխատանքների հարցերին՝ ներկայացնելով դրանց շուրջ նախատեսվող աշխատանքները:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

   Համաժողովին ելույթով հանդես եկավ ՀՄՆԿ գործադիր քարտուղար Ալիքս Պերրինյոն դե Տրոյեն՝ ներկայացնելով արված աշխատանքները կազմակերպության կողմից և սահմանված աշխատանքային ծրագրի կատարողականները, մանրամասնելով ՀՄՆԿ ֆինանսական խնդիրները՝ կապված ֆիքսված

ծախսերի բարձրացման, վերջին երեք տարիների ընթացքում Հունգարիայում ավելի քան 25% արժեզրկման և այլ տնտեսական գործոնների ազդեցության վերաբերյալ: Աշխատանքային խմբերի բաժանվելով՝ ՀՄՆԿ անդամ երկրների կոնտակտային անձինք փորձեցին ներկայացնել զարգացման տեսլականներ, որոնք ամփոփվեցին քարտուղարության կողմից և հետագայում կներկայացվեն 28-րդ Ընդհանուր Համաժողովին:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝**

Հանդիպման արդյունքում որոշվեց, որ ՀՄՆԿ քարտուղարությունը անդամ երկրների կոնտակտային անձանց կուղարկի հարցում, որով յուրաքանչյուր երկիր կընտրի ֆինանսական իրավիճակի լուծման տարբեր մոտեցումներից մեկը, որից հետո ստացված արդյունքները կամփոփվեն գալիք 28-րդ Ընդհանուր Համաժողովին:

Որևէ փաստաթուղթ հանդիպման ընթացքում չի ստորագրվել:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

ՀՄՆԿ անդամ երկրների կոնտակտային անձանց ներկայացվելիք հարցման մասով սահմանվեց ժամկետ՝ մինչև մարտի 28-ը ներկայացնել ՀՄՆԿ քարտուղարություն նշված հարցման պատասխանները, որոնց արդյունքերը կվերլուծվեն և հետագայում կներկայացվեն ՀՄՆԿ 28-րդ Ընդհանուր Համաժողովին:

Առաջարկվեց նաև փոփոխություններ իրականացնել ՀՄՆԿ գործող կանոնադրության մեջ, որի մասով աշխատանքային խմբին հանձնարարվեց մինչև ընթացիկ տարվա սեպտեմբեր ամիսը ներկայացնել փոփոխության նախագիծ:

9. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Նարինե Միկիչյան

26.03.2024թ.